

Սկզբնաղբյուր՝ <http://hraparak.am/?p=121135&l=am/meknabanum+e+kyh+naxagahy>

ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանը վստահեցնում է, որ նոր Ընտրական օրենսգրքի փոփոխությունները հանձնաժողովի անդամներն ու ընտրական պրոցեսին մասնակցող այլ անձինք դասընթացների ընթացքում հեշտությամբ կյուրացնեն: Մինչդեռ արդեն իսկ մտավախություններ կան, որ այն բավականին խրթին է, եւ ընտրական պրոցեսի վերահսկողական մեխանիզմներից եւ այլ նրբություններից լիարժեք գլուխ հանել հնարավոր չէ: Այս եւ այլ խնդիրներ մեկնաբանում է Տ. Մուկուչյանը:

ՏԻՄ ընտրությունները՝ հին օրենսգրքով

Սեպտեմբերի 18-ին եւ հոկտեմբերի 2-ին նախատեսվող ՏԻՄ ընտրությունները կանցնեն նույն կանոնակարգումներին համապատասխան, որոնք ամրագրված են եղել նախորդ Ընտրական օրենսգրքով: Այստեղ միակ նորույթը, որ արդեն նոր օրենսգրքի պահանջով է, Գյումրիում եւ Վանաձորում անցկավող ընտրությունների մոդելն է՝ համամասնական ընտրակարգով: Քվեարկության մեխանիզմը մնալու է նույնը, պարզապես ընտրություններն անցկացվելու եւ արդյունքներն ամփոփվելու են երեւանյան մոդելով՝ ավագանու ընտրություն, որի արդյունքում հաղթած թիմն էլ կառաջադրի քաղաքապետի իր թեկնածուին: Մի նորություն էլ կա, որ ամրագրված է արդեն նոր Սահմանադրությամբ՝ ավագանու անդամի կամ համայնքի ղեկավարի թեկնածու կարող է առաջադրվել արդեն 18 տարին լրացած քաղաքացին. սա տարածվում է նաեւ այս ՏԻՄ ընտրությունների վրա: Մնացած ամեն ինչ կլինի հին օրենքներով:

2017-ի ընտրություններում դիտորդների եւ լրագրողների ներկայությունը

Եթե նախկինում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները պետք է անցնեին նախնական որակավորման գործընթաց, այժմ այդ գործընթացը թողնված է այդ կազմակերպություններին: Լինելու է հավատարմագրման գործընթաց, նախկինում դիտորդները պետք է ներկայացնեին երկու վկայական՝ հավատարմագրված դիտորդի եւ որակավորման դասընթացների մասնակցության: Այժմ միայն հավատարմագրման վկայականն է անհրաժեշտ: Ըստ Մուկուչյանի՝ դասընթացներ չկազմակերպելը բնավ չի նշանակում, թե այդ կազմակերպությունները չեն իրականացնի իրենց դիտորդների ուսուցման դասընթացներ: Իսկ այդ «ազատականացումը» ռիսկ չի՝ առաջացնի, որ, նախորդ փորձերից ելնելով, ընտրություններից մի քանի օր առաջ նորաբաց ինչ-որ ՀԿ-ներ չեն հայտնվի ու թաղային ղեմքերին դիտորդի բեյջով չեն գործուղի տեղամասեր՝ այս կամ այն թեկնածուի, ուժի օգտին աշխատելու: Մուկուչյանն ասաց, որ եթե դիտորդները տեղամասային կենտրոններում չարաշահեն իրենց իրավունքները, ապա նոր ԸՕ-ն թույլ է տալիս, որ հանձնաժողովի նախագահը դուրս հրավիրի նրանց: Իսկ ի սկզբանե նման դեպքերը կանխող օրինական մեխանիզմներ, որ «Ֆեյք» դիտորդներ մուտք չգործեն, չկա՝ «Օրենքում կա կետ, ըստ որի՝ դիտորդական առաքելության իրականացման համար կարող են դիմել տեղական այն ՀԿ-ները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող մեկ տարին ներառում են ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, եւ եթե նրանք չեն աջակցում թեկնածուներին կամ կուսակցություններին»: Լրագրողների մասով էլ գոյություն ունի սահմանափակում՝ յուրաքանչյուր լրատվական գործունեություն իրականացնող կարող

է ԿԸՀ-ում հավատարմագրել իր անունից տարածվող միայն մեկ ՁԼՄ եւ դրա ոչ ավել, քան 50 ներկայացուցիչ: Նշենք, որ նախորդ ընտրություններում, դիտորդների նման, լրագրողների անվան տակ եւս տարբեր «գորշ» դեմքեր էին սպրդում ընտրատեղամասեր ու «կոնտրոլ» անում՝ հոգուտ այս կամ այն թեկնածուի: Ըստ Մուկույչանի՝ օրենքի այս կետով փորձել են նման երեւոյթների դեմն առնել:

«Որքան կուսակցություն, այնքան քվեաթերթիկ»

Նոր ԸՕ-ով՝ ընտրողին քվեախուց մտնելիս տրամադրվելու է ոչ թե մեկ քվեաթերթիկ, այլ ամեն կուսակցության անունով մեկ քվեաթերթիկ, որի մի երեսին գրված կլինի կուսակցության անունը, դարձերեսին՝ ռեյտինգային ցուցակը: Ընտրողը դրանցից մեկի վրա նշումն անելու է կուսակցության եւ անձի օգտին, ապա թերթիկը պետք է գցի քվեատուփի մեջ, իսկ մյուսները, այսպես ասած՝ աղբարկղը: Արդյոք սա «կարուսելի» ռիսկ չի՞ առաջացնի, որ ընտրողը, ենթադրենք, մասնակից 20 կուսակցության քվեաթերթիկներից մեկը կգցի քվեատուփի մեջ, մյուս 19-ն իր հետ դուրս կհանի, որպեսզի «ներկայացնի» ում հարկն է: Տիգրան Մուկույչանը կարծում է, որ սա ավելի վստահելի մեխանիզմ է ընտրակեղծիքների դեմ: «Եթե տեղամասային կենտրոնում ընտրողը կարող է ստանալ քվեաթերթիկներ, դրանցից մեկն ընտրի, մյուսները գցի արկղի մեջ, անիմաստ է դառնում որեւէ քվեաթերթիկ մեկ այլ ընտրողի փոխանցելը, որովհետեւ հաջորդ մտնողը կարող է ազատորեն այն առանձին արկղի մեջ դնել նետված քվեաթերթիկներից ընտրել այն մեկը, որն ինքն ուզում է: Այսինքն՝ դա դառնում է անիմաստ: Այսինքն՝ գաղափարը հենց դա է, որ դրանով, ըստ էության, բացառվում է քվեաթերթիկ դուրս բերելը կամ որեւէ այլ ընտրողի միջոցով տեղամաս տալը, որովհետեւ դա, միեւնոյն է, որեւէ օգուտ չի տալու»: Իսկ եթե նույն ծրարի մեջ մեկից ավելի քվեաթերթիկ դրվի, ո՞րն է հաշվարկվելու: Մուկույչանն ասաց, որ ծրարի անկյունում թափանցող կտրվածք է լինելու, որտեղից էլ դրոշմակնիք է դրվելու քվեաթերթիկի վրա: Գումարած դրան՝ յուրաքանչյուր քվեաթերթիկ համարակալված է լինելու: Եթե մի քանի հատ լինի ծրարի մեջ, կհաշվարկվի այն մեկը, որի վրա կա այդ կնիքը: Ինչ վերաբերում է նախորդի համեմատ մի քանի անգամ մեծ քանակությամբ քվեաթերթիկ տպագրելու ծախսերին, ապա ԿԸՀ նախագահն ընդունեց, որ դա, բնականաբար, լրացուցիչ ծախսեր կառաջացնի: Բայց դա նախատեսված է ի սկզբանե:

Ցուցակների հրապարակում

Ընդդիմությունն ու քաղհասարակությունը «4+4+4» ֆորմատով ամիսներ շարունակ գլուխ էին կոտրում՝ հասնելու իրենց գերնպատակին՝ քվեարկությունից հետո ստորագրված ցուցակների հրապարակմանը: Նրանց երազանքն իրագործվեց մասնակի: «Նախատեսվում է, որ աշխատանքների ավարտից հետո տեղամասերում առկա մասնակիցների գրանցումն ապահովող սարքավորումը տպագրելու է համապատասխան ժապավեն, որի վրա նշված են լինելու ընտրած անձանց հերթական համարները, եւ համադրելիություն է իրականացվելու նախապես հրապարակված ցուցակների հետ, թե ովքեր են եկել ընտրության, ովքեր՝ ոչ: Եվ եւս մեկ գործառույթ էլ կա. երբ ցուցակների հետ կապված հաշվարկի աշխատանքներն ավարտվում են, տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց տրամադրվելու է մինչեւ 30 րոպե ժամանակ՝ քաղվածքներ անելու ցուցակներից եւ հաշվարկելու, թե որքան մարդ է եկել: Այսինքն՝ ցուցակները կհրապարակվեն, բայց միայն հանձնաժողովի ներսում, այն էլ՝ 30 րոպեով»: Իսկ 30 րոպեում արված քաղվածքները դատարան ներկայացնելու հիմք կարող են հանդիսանալ: Մուկույչանն այս հարցը մի քիչ ծամծմելուց, օրենքներից ցիտումներ անելուց հետո, ի վերջո, հանգեց այն եզրակացության, որ, ըստ էության, կարող է. «Գիտե՞ք, ամեն դեպքում, եթե դա փաստաթուղթ է, որ տրվում է

տեղամասային կենտրոնից... իհարկե, դատարանում դա եւս, ինչպէս ցանկացած այլ ապացույց, կարող է ներկայացվել: Այդ քաղվածքը, ինչպէս եւ տեխնիկական սարքավորման կողմից տրված տեղեկանքը, նաեւ մյուս ցանկացած այլ ապացույց միշտ էլ կարելի է ներկայացնել դատարան»: Դա ամրագրված է օրենքով: «Իհարկե, դա ակնհայտ է, յուրաքանչյուր ընտրական փաստաթղթից կատարված քաղվածք, որի վրա կողմը դատարանում կառուցում է իր մոտեցումը, իր փաստարկը, նա ցանկացած ապացույց կարող է ներկայացնել դատարանին»:

Կեղծիքները, Մուկուչյանն ու ԿԸՀ-ն

Տարիներ շարունակ կեղծված ընտրությունների մեջ հասարակությունը, ընդդիմադիր ուժերը մեղադրել ու շարունակում են մեղադրել ԿԸՀ-ին ու դրա ղեկավար Տիգրան Մուկուչյանին, որ «թվանկարչությամբ», տարատեսակ մանիպուլյացիաներով կեղծել են վերջնական արդյունքները՝ հոգուտ ներկա իշխանությունների: Մուկուչյանն այս հարցում ունի իր ուրույն մոտեցումը: Նրա խոսքով՝ իրենք քվեարկության արդյունքների մասին առաջին տեղեկատվությունն ստանում են տեղամասային հանձնաժողովից: Այստեղից այդ տվյալները նախ փոխանցվում են ընտրատարածքային հանձնաժողով, որտեղ այդ տեղեկությունները մուտք են արվում համակարգիչ եւ ԿԸՀ-ի կողմից առցանց ռեժիմով հրապարակվում տեղամաս առ տեղամաս. «Հիմա եթե այս շղթայում տեղամասային հանձնաժողովում ստացվում են այլ տեղեկություններ, ընտրատարածք է տարվում այլ արձանագրություն, եւ դա մուտք է լինում հանձնաժողով, հետո գալիս է Կենտրոնական ընտրական հանձնաժողով, եւ փոխվում են այդ տվյալները... եթե թեկուզ տեսականորեն դա այդպէս լինէր, ես, իհարկե, միանշանակ կհամաձայնէի, որ ԿԸՀ-ն փոխում է ինչ-որ թվեր եւ այլն: Բացի այդ՝ ՏԸՀ-ներում կազմվում են արձանագրություններ, դրանցից ստանում են քաղվածքներ, այդ տվյալները հրապարակվում են ԿԸՀ-ի կողմից հենց քվեարկության օրը եւ կեսգիշերից սկսած, երբ յուրաքանչյուրը կարող է նստել եւ հետեւել ողջ գործընթացին ու համեմատել տվյալները»: Բայց, միեւնույն է, հանրությունը շարունակում է կասկածել, որ այդ թվերը՝ տեղամասերից սկսած մինչեւ ԿԸՀ, կեղծվում են, եւ ինչ-որ տեղ, շղթայի մի օղակում, գուցե ամբողջ շղթայում, այդ ճիշտը կորում է, իրականությունը՝ խեղաթուրվում: